3.6.ՌՈՒԱՆԴԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՌԻՉՔԱՁԵՎ ԱՃԸ

ՍՎԵՏԼԱՆԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ
16.07.2021-20.09.2021

Ներածություն

Աղյուսակ 1[1]

Ռուանդայի Հանրապետության հիմնական բնութագրիչները 1994 և 2019 թթ.

Բնութագրիչներ	*1994*	*2019*
Տարածք (կմ^2)	24,670	24,670
Բնակչություն (մարդ)	5,936,253	12,626,938
Կյանքի միջին տևողություն (տարի)	27.7	69
Տնտեսական աճի տեմպ (%)	-50.25	9.46
ՕՌԻՆ զուտ ներհոսք (ԱՄՆ դոլար)	1,000	384,461,864
Ապրանքների և ծառայությունների արտահանում (ԱՄՆ դոլար)	47,498,580	2,258,510,232

Աղյուսակ 1-ում ներկայացված են Ռուանդայի Հանրապետությունը բնութագրող 1994 թ. (երբ տեղի ունեցավ ցեղասպանությունը) և 2019 թ. ցուցանիշները:

«Ռուանդա՝ Աֆրիկյան բարի լուրերի պատմություն»[2]. այսպես կարելի էր բնութագրել Կենտրոնական Աֆրիկայի այս երկիրը, որը շատերը փորձում էին համարել Աֆրիկյան Սինգապուր[3]: Շատերը գիտեն ասիական վիշապների՝ Չինաստանի, Հարավային Կորեայի, Սինգապուրի, Թայվանի և Հոնկոնգի «տնտեսական հրաշքի» մասին, և գրեթե ոչ ոք չի լսել Ռուանդայի՝ աֆրիկյան փոքր երկրի ֆենոմենալ զարգացման մասին, երկիր, որտեղ արյուն է թափվել ոչ վաղ անցյալում: 1994 թ. աշխարհը ցնցվեց այն իրադարձություններից, որոնք տեղի ունեցան այս երկրում, քանի որ 1990-ականների սկզբներին թութսի և հուտու ցեղերի միջև ընթացող քաղաքական պայքարը ուղեկցվում էր քաղաքացիական պատերազմով, որն ավարտվեց թութսիների ցեղասպանությամբ, սպանվեց 800000 թութսի, ովքեր պատկանում էին Պ. Կագամեի

[1] Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով հետևյալ աղբյուրը՝ World Bank (2021). World Development Indicators, https://databank.worldbank.org/source/world-development-indicators, Last Updated: 07/30/2021.

[2] Cropley, Ed. Breakingviews - Review: Rwanda, Africa's good-news story gone bad. Reuters, 2021, April 25, available at: https://www.reuters.com/article/us-rwanda-politics-breakingviews-idUSKBN2BO6MW (last accessed: October 5, 2021)

[3] Uwizeyimana, D. (2019). Is A Singaporean-Modelled Developmental Approach Viable for other African Nations? Lessons from Rwanda. African Renaissance, Vol. 16, (No. 1), p. 200, DOI: 10.31920/2516-5305/2019/v16n1a10

գլխավորած ցեղախմբին՝ հայրենասիրական ճակատի մարտիկներին[1]: Իսկ ըստ Ա. Գուիչաոյի՝ ընդամենը 3 ամսվա ընթացքում Ռուանդայում գազանաբար սպանվեց մոտ 500000-2000000 մարդ[2]: Ռուանդական կոտորածներն ու քաղաքացիական պատերազմն ավարտվեցին, երբ իշխանության եկավ Պոլ Կագամեն:

Կագամեն, որը չէր թաքցնում հիացմունքը Սինգապուրի բարեփոխումների կնքահայր Լի Կուան Յուի նկատմամբ, ձեռքն առավ հայտնի բարեփոխիչի բաղադրատոմսերը և մի քանի տարվա ընթացքում աղքատ Ռուանդան նմանեցրեց Աֆրիկական Սինգապուրի, որը աշխարհում հայտնի է տնտեսական հեղափոխության իրականացման հաջող փորձով: «Մենք ցանկանում ենք շատ բան սովորել Սինգապուրից, որը շատ հաջողակ է եղել և պատմականորեն առկա բազմաթիվ մարտահրավերները դարձրել է հնարավորություններ».-ասում է Կագամեն[3]: *«1965 թ. օգոստոսի 9-ին Սինգապուրն անկախացավ և երեսուն տարվա ընթացքում աղքատ երկրից վերածվեց հարուստ ու առաջատար երկրի»*[4]:

Ռուանդայի Հանրապետության ուսումնասիրությունը ***արդիական է,*** քանի որ շատ հետաքրքրական է այն, որ 20-րդ դարի ամենախոշոր ցեղասպանություններից մեկը վերապրած երկրում 2001-2019 թթ. իրական ՀՆԱ-ի տարեկան միջին աճի տեմպը (բաղադրյալ) կազմել էր 7.6 %[5]: Հայաստանի տարածքի չափով Ռուանդան, գրեթե չունենալով հանքային պաշարներ և ծովային հաղորդակցություն, հաղթահարելով ցեղասպանությունը, սովը և քաղաքացիական պատերազմը, կանխատեսումների համաձայն՝ 2019 թ. համարվելու էր աշխարհի ամենաարագ աճող տնտեսություն ունեցող 5 երկրներից մեկը[6]: Երկիրն իր զարգացման մեկնարկային շրջանում ավելի վատ փուլում էր, քան Հայաստանը անկախության սկզբի տարիներին (Ռուանդայի ՀՆԱ–ն

---

[1] BBC. Rwanda's Paul Kagame - visionary or tyrant? 2017. August 3. Available at: https://www.bbc.com/news/10479882 (last accessed: October 5, 2021)

[2] Guichaoua, André (2020). Counting the Rwandan Victims of War and Genocide: Concluding Reflections. Journal of Genocide Research, 22:1, p.125, DOI: 10.1080/14623528.2019.1703329

[3] Blair, E., Uwiringiyimana, C. Singapore's visionary draws followers in Africa. Reuters, 2016, March 24. Available at: https://www.reuters.com/article/us-singapore-lee-africa-idINKBN0MK1OQ20150324 (last accessed: October 5, 2021)

[4] Սարգսյան Լ., Գրիգորյան Դ., Սինգապուրի «տնտեսական հրաշքը», «Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում (Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում- հատոր 1), գիտաժողովի նյութեր/ գիտ. խմբագիր՝ Վ.Լ.Հարությունյան, Եր., ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2020 թ., էջ 176:

[5] Հաշվարկը իրականացվել է հետևյալ աղբյուրի տվյալների հիման վրա՝ Bank (2021). World Development Indicators, https://databank.worldbank.org/source/world-development-indicators, Last Updated: 07/30/2021

[6] Bajpai, P. The 5 Fastest Growing Economies in the World. Nasdaq, 2019, June 27. Available at: https://www.nasdaq.com/articles/the-5-fastest-growing-economies-in-the-world-2019-06-27 (last accessed: October 5, 2021)

1994 թ. 753,636,370.5 ԱՄՆ դոլար էր, իսկ ՀՀ-ինը 1991թ.՝ 2,069,870,130 ԱՄՆ դոլար)[1]:

Բացի տնտեսական մի շարք ցուցանիշների թռիչքաձև աճից (որը կներկայացնենք վերլուծություններ բաժնում), Ռուանդայի ուսումնասիրությունը հետաքրքրություն է ներկայացնում նաև այլ առանձնահատկությունների առումներով.

- Ռուանդան 2003 թվականից սկսել է քննարկումներ պոլիէթիլենային տոպրակների արգելքի վերաբերյալ և 2008 թվականին դարձել է այն առաջանցիկ երկրներից, որոնք այլևս չեն կիրառել դրանք[2]:
- Ռուանդայի բնակչությունն ունի երիտասարդ կազմ, ինչն այսօր աշխարհի մի շարք զարգացած երկրների համար գերխնդիր է, մասնավորապես՝ 2020 թ. բնակչության ընդհանուր թվաքանակի մեջ 65 տարեկանից բարձր տարիք ունեցողները կազմել են ընդամենը 3.1 %, իսկ 15-64 տարեկանները՝ ընդհանուր բնակչության 57.4 %-ը[3]:
- Կյանքի միջին տևողությունը 2005-2019 թթ. ավելացել է 15 տարով. 2005 թ. այն կազմում էր 55.25 տարի, իսկ 2019 թ.՝ 69 տարի[4]:
- Ռուանդայի կառավարման համակարգում մեծ տեղ էր հատկացվում կանանց: 2013-2018 թթ. երկրի խորհրդարանի 64 %-ը կանայք են եղել[5]:
- 2020 թ. հունվարի դրությամբ Ռուանդայում 4G ծածկույթը կազմել է 96.6 %, որը աննախադեպ ցուցանիշ է տվյալ սոցիալ-տնտեսական զարգացվածության մակարդակ ունեցող երկրի համար[6]:
- Ռուանդայում բժշկական հեռավոր կլինիկաներում անհրաժեշտ արյուն հասցնելու համար օգտագործվում են անօդաչու թռչող սարքեր[7]:

Հոդվածի **նպատակն է՝** ներկայացնել Ռուանդայի թռիչքաձև աճող տնտեսությունը՝ վերլուծելով որոշ ցուցանիշներ և համաթվեր, բացահայտել դրան

---

[1] World Bank (2021). World Development Indicators, https://databank.worldbank.org/source/world-development-indicators, Last Updated: 07/30/2021

[2] Behuria, P. (2021). Ban the (plastic) bag? Explaining variation in the implementation of plastic bag bans in Rwanda, Kenya and Uganda. Environment and Planning C: Politics and Space. https://doi.org/10.1177/2399654421994836

[3] World Bank (2021). World Development Indicators, https://databank.worldbank.org/source/world-development-indicators, Last Updated: 07/30/2021

[4] Տե՛ս նույն տեղում:

[5] UN Women. Revisiting Rwanda five years after record-breaking parliamentary elections. 2018, August 13. Available at: https://www.unwomen.org/en/news/stories/2018/8/feature-rwanda-women-in-parliament (last accessed: October 5, 2021)

[6] World Bank (2020). Rwanda Economic Update, January 2020: Accelerating Digital Transformation in Rwanda. World Bank, Kigali. World Bank. p. 20. https://openknowledge.worldbank.org/handle/10986/33247 (last accessed: October 6, 2021)

[7] Fleming, S., In Rwanda, Drones Are Delivering Blood to Remote Communities. World Economic Forum, 2018, December 11. Available at: https://www.weforum.org/agenda/2018/12/in-rwanda-drones-are-delivering-blood-to-remote-communities/ (last accessed: October 6, 2021)

հասնելու միջոցները և առաջարկել ՀՀ տնտեսության մեջ դրանց տեղայնացման հնարավոր ուղիներ:

Նշված նպատակին հասնելու համար առաջադրվել են հետևյալ **խնդիրները.**

- վերլուծել Ռուանդայի ՀՆԱ–ն բնութագրող ցուցանիշները՝ իրական ՀՆԱ-ն, ՀՆԱ–ն մեկ շնչի հաշվով, մեկ շնչին ընկնող ՀՆԱ–ի տարեկան աճի տեմպը, տնտեսական աճի տեմպը,
- վերլուծել Ռուանդայի սոցիալ–տնտեսական մի շարք այլ ցուցանիշներ և ինդեքսներ, որոնք պատկերացում են տալիս տնտեսության թռիչքաձև աճի վերաբերյալ,
- ուսումնասիրել Ռուանդայի տնտեսական զարգացման ռազմավարությունները, մասնավորապես՝ Vision 2020[1] և Տնտեսական զարգացման և աղքատության հաղթահարման ռազմավարությունը (ՏԶԱՀՌ, EDPRS)[2], որտեղ հստակ նախանշված են երկրի տնտեսության զարգացման հնարավոր ուղիները,
- ներկայացնել Հայաստանի համար տնտեսական կայունություն և վերելք ակնկալող Ռուանդայի փորձի հնարավոր օգտագործման առաջարկություններ:

Գրականության վերլուծություն

Պատմությունից հայտնի են տարբեր երկրների տնտեսական բարեփոխումների (արդիականացման) բազմաթիվ փորձեր՝ տարբեր անվանումներով, ինչպես, օրինակ, ստոլիպինյան ռեֆորմները Ռուսաստանում: Ներկայումս այդ բարեփոխումները կոչվում են «տնտեսական վագր», «տնտեսական հեղաշրջում», «տնտեսական հրաշք» եզրույթներով[3]:

Pritish Behuria-ն և Tom Goodfellow-ն իրենց «Disorder of Miracle Growth in Rwanda» հետազոտությունում հիմնավորում են, որ Ռուանդայում 1994-2008 թթ. արձանագրվել է տնտեսական թռիչքաձև աճ, որը ձևավորվել է երեք հիմնական գործոնների ազդեցությամբ[4]:

---

[1] Ministry of Finance and Economic Planning of Rwanda (2000). Rwanda vision 2020. Kigali, Rwanda, 30 p.

[2] Ministry of Finance and Economic Planning (2007). Economic development & poverty reduction strategy 2008 – 2012, Kigali, Rwanda, 168 p. Ministry of Finance and Economic Planning (2013). Economic development and poverty reduction strategy II 2013-2018, Kigali, Rwanda, 144 p.

[3] Հարությունյան Վ., «Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում (Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում- հատոր 1), գիտաժողովի նյութեր/ գիտ. խմբագիր՝ Վ.Լ.Հարությունյան, Եր., ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2020 թ., էջ 52-53:

[4] Behuria, P., & Goodfellow, T. (2017-11-16). The Disorder of 'Miracle Growth' in Rwanda: Understanding the Limitations of Transitions to Open Ordered Development. In Deals and Development: The Political Dynamics of Growth Episodes.: Oxford University Press. pp. 217-249. DOI:10.1093/oso/9780198801641.003.0008. Retrieved 12 Sep. 2021, from https://oxford.universitypressscholarship.com/view/10.1093/oso/9780198801641.001.0001/oso-9780198801641-chapter-8.

Ռուանդայում տնտեսական թռիչքաձև աճի նախապայմանները և ուղիները տարբեր են, և կան երեք խումբ հետազոտողներ, որոնք հակված են պարզելու տնտեսական աճի շարժառիթները՝ անհամաչափորեն շեշտը դնելով Ռուանդայի զարգացման մեկ առանձնահատուկ հատկության վրա: Առաջին խումբը կենտրոնանում է Ռուանդայի կողմից շուկայական բարեփոխումների ընդունման վրա, որին աջակցում է արտաքին օգնությունը. տնտեսական աճ՝ շնորհիվ առաջին հերթին գյուղատնտեսական ոլորտի ազատականացման՝ երկրի հիմնական արտահանվող ապրանքներ ունենալով սուրճը և թեյը[1]: 2006 թ. սուրճի արտահանումը աճել է 23.5 % ով՝ ապահովելով 46 միլիոն եկամուտ[2]: Ըստ այս խմբի՝ սույն ոլորտներում ազատականացումն իսկապես նշանակալի է եղել: Երկրորդ խումբը ուղղորդվում է «երկրորդ սերնդի բարեփոխումների» այնպիսի խնդիրներով, ինչպիսիք են կրթության բարելավված ցուցանիշները, սոցիալական պաշտպանվածությունը և կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնումը՝ որպես աճի հաջողության գրավական[3]: Երրորդ ուղին հետերոդոքսիկ հեռանկար ունի. երկրի հաջողությունը հիմնականում պայմանավորվել է տնտեսության մեջ ռազմավարական երկարաժամկետ միջոցներով միջամտելու նպատակով համագործակցային (մասնավոր – պետական) ձեռներեցության օգտագործմամբ[4]:

Հետազոտության տեսամեթոդական հիմքերը

Նախքան հետազոտության տեսամեթոդական հիմքերին անցնելը անհրաժեշտ ենք համարում նշել, որ Ռուանդայի ցանկացած սոցիալ-տնտեսական ցուցանիշի վերլուծության մեկնարկային տարեթիվ ընտրելու ենք 1994 թ.՝ որպես շրջադարձային տարի: Հետազոտության մեջ ուսումնասիրվել է Ռուանդայի տնտեսական զարգացման և աղքատության հաղթահարման

---

[1] Behuria, P., & Goodfellow, T. (2017-11-16). The Disorder of 'Miracle Growth' in Rwanda: Understanding the Limitations of Transitions to Open Ordered Development. In Deals and Development: The Political Dynamics of Growth Episodes.: Oxford University Press. p. 217 DOI:10.1093/oso/9780198801641.003.0008. Retrieved 12 Sep. 2021, from https://oxford.universitypressscholarship.com/view/10.1093/oso/9780198801641.001.0001/oso-9780198801641-chapter-8.

[2] Boudreaux, K. (2007). State Power, Entrepreneurship, and Coffee: The Rwandan Experience. *Mercatus Policy Series Policy Comment*, No. 15. Arlington, VA: Mercatus Center at George Mason University, p. 11. Available at: https://www.mercatus.org/system/files/Rwanda_Policy_Series.pdf (last accessed: October 6, 2021)

[3] Behuria, P., & Goodfellow, T. (2017-11-16). The Disorder of 'Miracle Growth' in Rwanda: Understanding the Limitations of Transitions to Open Ordered Development. In Deals and Development: The Political Dynamics of Growth Episodes.: Oxford University Press. p. 218. DOI:10.1093/oso/9780198801641.003.0008. Retrieved 12 Sep. 2021, from https://oxford.universitypressscholarship.com/view/10.1093/oso/9780198801641.001.0001/oso-9780198801641-chapter-8.

[4] Տե՛ս նույն տեղում:

ռազմավարական փաստաթղթերը (ՏԶԱՀՌ 2008-12, 2013-18, EDPRS)[1]: Գիտական առարկայականության սկզբունքն ապահովելու համար սույն հետազոտության համար մեթոդաբանական հիմք են ծառայել պատմական, տրամաբանական, համեմատական և գործոնային վերլուծության մեթոդները:

Շրջանառության մեջ են դրվել հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատանքները, իսկ տեղեկատվական հիմք են ծառայել Համաշխարհային բանկի և այլ կառույցների պաշտոնական նյութերը:

Վերլուծություն

Ռուանդան սոցիալ-տնտեսապես ծնկի էր եկել, քանի որ ՀՆԱ-ն զգալի անկում էր արձանագրել 1994 թ.՝ գերազանցելով -50 %-ի սահմանը (տե՛ս աղյուսակ 2): Ռուանդան փորձել է առաջնորդվել այն փաստարկով, որ աղքատության արդյունավետ կերպով հաղթահարումը չի կարող հնարավոր լինել առանց խաղաղության տարածման, անվտանգության, միասնության և հաշտեցման[2]: Այս առումով Ռուանդան նպատակ ունի ապահովելու մարդկային կյանքի անվտանգությունը, որը դուրս է գալիս ռազմական նկատառումներից և ներառում է համայնքի կյանքի բոլոր ասպեկտները, այսինքն՝ տնտեսական, սոցիալական և բնապահպանական անվտանգությունը[3]:

Աղյուսակ 2[4]

Ռուանդայի ՀՆԱ-ն բնութագրող ցուցանիշները՝
արտահայտված ԱՄՆ դոլարով

Ցուցանիշներ	*1994 թ.*	*2008 թ.*	*2019 թ.*
ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	753,636,3701	5,177,015,141	10,355,974,217
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	126.95	543	820
Մեկ շնչի հաշվով ՀՆԱ–ի աճի տեմպ	-47.5%	8.2%	9.4 %
ՀՆԱ-ի աճի տեմպ	-50.25%	11.16%	6.64%
Մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ (ԱՄՆ դոլար, 2010=100)	219.53	563.56	901.14

Ռուանդայի մեկ շնչի հաշվով իրական ՀՆԱ–ն 2019 թ. 1994–ի համեմատ ավելացել է ավելի քան 4 անգամ, որը բավական շոշափելի արդյունք է (տե՛ս աղյուսակ 2): Ռուանդայում թռիչքաձև աճի ապահովման համար կիրառվել է

[1] Ministry of Finance and Economic Planning (2007). Economic development & poverty reduction strategy 2008 – 2012, Kigali, Rwanda, 168p. Ministry of Finance and Economic Planning (2013). Economic development and poverty reduction strategy II 2013-2018, Kigali, Rwanda, 144 p.

[2] National Unity and Reconciliation Commission of Rwanda (2016). Unity and Reconciliation Process in Rwanda. NURC: Kigali, Rwanda, p.91. ISBN: 978-99977-709-3-6

[3] Տե՛ս նույն տեղում, էջ 89:

[4] Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով հետևյալ աղբյուրը՝ World Bank (2021). World Development Indicators, https://databank.worldbank.org/source/world-development-indicators, Last Updated: 07/30/2021

Սինգապուրի փորձը, որն իրագործել էր մի շարք միջոցառումներ՝ «տնտեսական և սոցիալական բարեփոխումներ, կառուպցիայի դեմ արդյունավետ պայքար, քաղաքական կայունություն, երկարաժամկետ զարգացման կայուն ծրագրերի առաջադրում բոլոր ոլորտներում»[1]: Կոռուպցիան լայն հասկացություն է, որը ենթադրում է ձևական նորմերի, կանոնների փչացում, մի իրավիճակ, երբ սահմանված օրենքները փոխագրվում են այլ բովանդակությամբ: «Կոռուպցիան չի կարող վերացվել այնքան ժամանակ, քանի դեռ գոյություն ունի հարստությունը»[2]:

Կոռուպցիայի դեմ պայքարի արդյունքում երկիրը, ըստ Կոռուպցիայի ընկալման համաթվի, 2020 թ. 49-րդն էր 180 երկրների շարքում Չեխիայի և Օմանի հետ մեկտեղ՝ շրջանցելով ԵՄ մի շարք պետությունների՝ Հունաստանին, Հունգարիային և Բուլղարիային[3]:

Ռուանդայի ապագայի վերաբերյալ ազգային խորհրդատվական նստաշրջանները 1998-99 թթ. նախատեսեցին երկրի զարգացման ճանապարհային քարտեզի ստեղծում՝ որպես «Տեսլական 2020» (Vision 2020), որը հիմնված էր հետևյալ հիմնական ուղղությունների վրա[4].

- ազգի և դրա սոցիալական կապիտալի վերակառուցում,
- արդյունավետ, միավորող և մոբիլիզացնող պետության ներդաշնակ գործունեություն,
- Ռուանդայի հասարակության վերափոխում, սոցիալական կապիտալի ձևավորում՝ դրական մշակութային արժեքների, տեխնոլոգիական գիտելիքների (know-how), տնտեսական ռացիոնալության և սոցիալական տրամաբանության միջև հավասարակշռության հիման վրա,
- խաղաղություն, ներքին և արտաքին անվտանգություն և տարածաշրջանային կայունություն, ինչը հնարավորություն կտա երկրի տնտեսական և սոցիալական ինտեգրմանը տարածաշրջանում և ամբողջ աշխարհում:

Նշված տեսլականը իր մեջ ներառում է Տնտեսական զարգացման և աղքատության հաղթահարման երկու ռազմավարություն (ՏԶԱՀՌ)՝ ՏԶԱՀՌ 1 և ՏԶԱՀՌ 2: Առաջինը (ՏԶԱՀՌ 1) 2008-2012 թվականներին Ռուանդայի զարգացման գործընթացի ճանապարհային քարտեզն էր, մինչդեռ երկրորդը (ՏԶԱՀՌ 2) նախատեսված էր 2013-2018 թվականների զարգացման ծրագրերի

---

[1] Սարգսյան Լ., Գրիգորյան Դ., Սինգապուրի «տնտեսական հրաշքը», «Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում (Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում- հատոր 1), գիտաժողովի նյութեր/ գիտ. խմբագիր՝ Վ.Լ.Հարությունյան, Եր., ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2020 թ., էջ 177:

[2] Սարինյան Ռ., Ուրվագիծ արդի հայ տնտեսագիտական մտքի պատմություն, VI, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021 թ., էջ 98:

[3] Transparency International (2021). Corruption perceptions index 2020, Transparency International, International Secretariat: Berlin, Germany, p. 2. ISBN: 978-3-96076-157-0.

[4] National Unity and Reconciliation Commission of Rwanda (2016). Unity and Reconciliation Process in Rwanda. NURC: Kigali, Rwanda, p. 90, ISBN: 978-99977-709-3-6

համար: Երկու փաստաթղթերն էլ (ՏԶԱՀՌ 1 & 2) ընդգծում են երկրի զարգացման բոլոր ծրագրերում միասնության և հաշտեցման նշանակության բարձրացումը[1]: Առաջին ՏԶԱՀՌ - ի գործարկման արդյունքում իրական ՀՆԱ -ի միջին աճը կազմել է 8.2 %, իսկ աղքատությունը՝ 2006-2011 թթ. 56.7 %-ից նվազել է 44.9 %-ի[2]: Այս առումով առաջին ՏԶԱՀՌ-ը նպաստեց միասնությանը և հաշտեցմանը՝ խթանելով լավ կառավարումն ու ապակենտրոնացումը, վստահությունը, օրենքի գերակայությունը ընդլայնելը մարդու իրավունքներին ու սոցիալական համախմբվածությանը նպաստելը: Փաստաթուղթը շեշտում էր կառավարման, խաղաղության, անվտանգության, միասնության և հաշտության միջև կապը որպես կայուն քաղաքական միջավայրի հիմք: Նման կերպ երկրորդ ՏԶԱՀՌ-ը կենտրոնանում է ցածր մակարդակում գտնվող երկխոսության ընդլայնման վրա՝ վերջնական նպատակ ունենալով վերականգնել սոցիալական հարաբերությունները, ինչպես նաև վերականգնել վստահությունը, որը կորել էր պառակտիչ անցյալով և հատկապես 1994 թ. թութսիի դեմ ցեղասպանությամբ[3]:

Ուշագրավ է նաև անմիջական աղքատության հաղթահարմանը վերաբերող ծրագրերը, որոնցից է Vision 2020 Umurenge ծրագիրը (VUP). այն ՏԶԱՀՌ-ի առաջատար ծրագիր է, ամրագրված է Vision 2020-ում[4] և ուղղված է երկրի ամենաաղքատ ընտանիքների աղքատության նվազեցմանը: Այն իր մեջ ընդգրկում է սոցիալական և տնտեսական զարգացմանն ուղղված թե՛ աջակցության, թե՛ դրամական օգնությունների ծրագիր: VUP-ը սկսեց գործել 2008 թվականից և ներառում է 3 բաղադրիչ.

անմիջական աջակցություն, որը թիրախավորում է մարդկանց, որոնք չեն կարող մասնակցել աշխատանքային որևէ գործունեության առկա ծրագրի շրջանակներում (հաշմանդամներ, երեխաների գլխավորությամբ ընտանիքներ, տարեցներ, փողոցային երեխաներ, փախստականներ և այլն): Սրանք ծայրահեղ աղքատ, առանց աշխատանքային արտադրողականության ընտանիքներն են: Ֆինանսական աջակցության նպատակն է օգնել նրանց բավարարել իրենց հիմնական կարիքները, ինչպիսիք են սնունդը և ամենակարևորը՝ առողջության ապահովագրությունը:

Հասարակական աշխատանքներ, որոնք աշխատանքի (համայնքային աշխատանքի) հնարավորություն են ընձեռում տարբեր կատեգորիաների աղքատ մարդկանց (ծայրահեղ աղքատ), ովքեր կարողանում են իրականացնել աշխատանք ստանալու հնարավորությունները: Պայմանն այն է, որ այդ

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 92:

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] National Unity and Reconciliation Commission of Rwanda (2016). Unity and Reconciliation Process in Rwanda. NURC: Kigali, Rwanda, pp. 91-92. ISBN: 978-99977-709-3-6

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 93:

մարդիկ պետք է լինեն շրջաններում գտնվող ծայրահեղ աղքատ ընտանիքներից:

Վարկային փաթեթներ, որոնք ֆինանսական ծառայություններ (վարկ) են տրամադրում ծայրահեղ աղքատ մարդկանց, VUP-ով երաշխավորված միկրովարկերի միջոցով:

Եթե 1999 թ. Ռուանդայի բնակչության 78 %-ը համարվում էր աղքատ, երբ որպես աղքատության գիծ ընդունվում էր 1.90 ԱՄՆ դոլար օրական ցուցանիշը (2011=100, գնողունակության պարիտետ), ապա 2005 թ. այն կազմեց 69.1 %, իսկ 2016 թ.՝ 56.5 %[1]:

Խորհրդի (2011 թ. դեկտեմբերի 15-16) ընթացքում ներկայացված արդյունքները վկայում են, որ VUP ծրագրի ձեռքբերումները (2008 - 2011) այսպիսին էին[2].

- աշխատանք գտած 590,100 մարդ,
- գեներացված 15 մլրդ ռուանդական ֆրանկ,
- 81,693 մարդ ստացել է 4 մլրդ ռուանդական ֆրանկ արժողությամբ անմիջական դրամական օգնություն,
- 92,136 մարդ ստացել է 8 մլրդ ռուանդական ֆրանկի ընդհանուր վարկ:

Ըստ Համաշխարհային բանկի՝ Գործարարությամբ զբաղվելու դյուրինության համաթվի՝ Ռուանդան 2019 թ. 190 երկրների շարքում գտնվել է 29-րդ տեղում[3]: Ուշագրավ է այն փաստը, որ 2019 թ. սեփականության գրանցմամբ Ռոանդան զբաղեցրել է 2-րդ տեղը և վարկերի ստացմամբ՝ 3-րդ տեղը 190 երկրների մեջ[4]: Սա վկայում է այն մասին, որ Ռուանդայում մեծ ուշադրություն է դարձվում նաև մասնավոր ոլորտին, գործարարության զարգացմանը և խրախուսմանը:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում երկրում ձևավորվել է քաղաքական կայունություն, կառուցվածքային տարբեր բարեփոխումներ ու արդյունավետ ինստիտուցիոնալ կառավարման ապահովում և քաղաքական միջավայր, որի արդյունքում վերջին տասնամյակում երկիրը գրանցել է միջին տարեկան ՀՆԱ-ի 7 % աճ (Սաբ-սահարյան Աֆրիկայի տարածաշրջանի 4 % միջին աճի տեմպի համեմատ)՝ դառնալով Աֆրիկայի երրորդ երկիրը տնտեսական աճի ցուցանիշով[5]:

Կատարված վերլուծության և Ռուանդայի ռազմավարական փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա ներկայացնենք Հայաստանի տնտե-

---

[1] World Bank (2021). World Development Indicators, https://databank.worldbank.org/source/world-development-indicators, Last Updated: 07/30/2021

[2] National Unity and Reconciliation Commission of Rwanda (2016). Unity and Reconciliation Process in Rwanda. NURC: Kigali, Rwanda, pp. 93-94. ISBN: 978-99977-709-3-6

[3] World Bank (2019). Doing Business 2019: Training for Reform. The World Bank: Washington, DC, p. 5.

[4] Տե՛ս նույն տեղում, էջ 199:

[5] Kadozi, E. (2019). Remittance Inflows and Economic Growth in Rwanda. Research in Globalization, Globalization 1 (2019) 100005, p.14. doi:10.1016/j.resglo.2019.100005

սության վերելքի ապահովման՝ մեր կողմից մշակված տեսլականի իրագործման կառուցվածքային օղակները և տրամաբանությունը։



Գծապատկեր 1. *Տեսլականի իրագործման ինստիտուցիոնալ բաղադրիչները*[1]

Գիտական նորույթը: Ռուանդայի տնտեսական և քաղաքական բազմասպեկտ վերլուծություններն և ուսումնասիրությունները թույլ են տվել բացահայտել Ռուանդայի տնտեսության թռիչքաձև աճի ապահովման պայմանները և գործոնները, որոնց հիման վրա մշակվել են Հայաստանի տնտեսական կայունության և առաջընթացի ապահովման տեսլականի (vision) իրագործման ինստիտուցիոնալ հիմքերը, մասնավորապես՝ ռազմավարական փաստաթղթեր և զարգացման ծրագրեր (աղքատության հաղթահարման ռազմավարություն, ազգային ներդրումային ռազմավարություն)՝ յուրաքանչյուրն իր տարեկան գործողությունների ծրագրով և բյուջեով։

[1] Գծապատկերը կազմվել է հեղինակի կողմից՝ հիմք ընդունելով Ռուանդայի փորձը։

Եզրակացություններ և առաջարկներ

Չնայած նրան, որ Ռուանդան 1994 թ. վերապրեց սոսկալի ցեղասպանություն, կարողացավ ապահովել Աֆրիկյան տարածաշրջանի «տնտեսական հրաշքը» և դարձավ ամենաարագ զարգացող տնտեսություն ունեցող երկիրը Աֆրիկյան մայրցամաքում[1]:

Ռուանդան իր նախագահի՝ Փոլ Կագամեի գլխավորությամբ դիտարժան առաջընթաց ունեցավ՝ 2001-2019 թթ. գրանցելով՝ 7.6 % տնտեսական աճ: Վերջին երկու տասնամյակների ընթացքում երկրում ձևավորվել է քաղաքական կայունության փորձառություն, տարբեր կառուցվածքային բարեփոխումներ և արդյունավետ ինստիտուցիոնալ կառավարման ապահովում և քաղաքական միջավայր[2]:

Ռուանդան մի շարք առանձնահատկություններ ունեցող երկիր է, որոնցից է կանանց 64 % ներկայացվածությունը խորհրդարանում, 2007 թվականից պլաստիկից հրաժարվելը և այլն: Նշված տնտեսական արդյունքների ապահովման մեջ, մեր կարծիքով, իր ուրույն տեղն ունի պետության ինստիտուցիոնալիզացիան, որը կարելի է ներկայացնել որպես առանձին բաղադրիչների՝ իրար մեջ սերտաճած ուրույն համակարգ:

Այսպիսով, եթե ամփոփելու լինենք, Ռուանդայի տնտեսության թռիչքաձև աճը համապատասխանում է Ասիական վագրի մոդելին կամ Սինգապուրի հանգուցյալ առաջնորդ Լի Քուան Յուի մոդելին՝ ավտորիտարիզմի կամ տնտեսական ազատականացման ներքո տնտեսական զարգացման մոդել՝ նախքան քաղաքական բարեփոխումները: Ասիական վագրի մոդելը անհամապատասխան է Աֆրիկայի համար և չի կարելի ակնկալել, որ այնտեղ կաշխատի երկար ժամանակ, քանի որ երկու մայրցամաքների հանգամանքներն ու պայմանները խիստ տարբեր են: Կագամեն կարող է փայլուն մարտավար լինել, բայց միանշանակ նա ունի քիչ հնարավորություններ:

Հոդվածում կատարված ուսումնասիրությունները թույլ են տալիս կատարելու ստորև բերվող 3 կիրառական առաջարկությունները, որոնք հնարավոր է գործարկել Հայաստանում.

1. ապակենտրոնացումը, վստահությունը, օրենքի գերակայությունը ընդլայնելու, մարդու իրավունքներին ու սոցիալական համախմբվածությանը նպաստելու նպատակով պետք է ապահովել խաղաղության, հաշտության, միասնության, անվտանգության մթնոլորտ, որը կապահովի պետության կառավարման, խաղաղության, անվտանգության, միասնության և հաշտության միջև կապը՝ որպես կայուն քաղաքատնտեսական միջավայրի հիմք:

---

[1] Nweze, C. (2018). The Unprecedented Economic Growth and Development of Rwanda, Policy brief. Institute for Politics and Society: Prague, Czech Republic, p.1.

[2] Kadozi, E. (2019). Remittance Inflows and Economic Growth in Rwanda. Research in Globalization, Globalization 1 (2019) 100005, p. 14. doi:10.1016/j.resglo.2019.100005

2. Անհրաժեշտ է տնտեսության կառավարումը դնել բացառապես ինստիտուցիոնալ հիմքերի վրա՝ տնտեսական և քաղաքական երկարաժամկետ ռազմավարությունների մշակմամբ։
3. Մշակել ՀՀ տնտեսության առաջընթացը ապահովող տեսլական հետևյալ բաղադրամասերով (տե՛ս աղյուսակ 3).

Աղյուսակ 3

Տեսլականի բաղադրիչները և նրա հատվող ոլորտները

Մշակվող տեսլականի բաղադրիչ մասերը	*Մշակվող տեսլականի հատման ոլորտները*
1. Ուժեղ կառավարություն և ունակ պետություն	1. Գենդերային հավասարություն 2. Շրջակա միջավայրի պահպանում և բնական ռեսուրսների կայուն կառավարում 3. Գիտություն և տեխնոլոգիա, ներառյալ ՏՀՏ
2. Մարդկային ռեսուրսների զարգացում և գիտելիքահենք տնտեսություն	
3. Մասնավոր հատվածի գերակայությամբ տնտեսություն	
4. Ենթակառուցվածքային զարգացում (տրանսպորտ, էներգետիկա, ջուր, հեռահաղորդակցություն, աղբի վերամշակում և այլն)	
5. Արտադրական և շուկայական գյուղատնտեսություն՝ զինված նորարարական տեխնոլոգիաներով	
6. Տարածաշրջանային և միջազգային տնտեսական ինտեգրում	

Օգտագործված գրականության ցանկ

1. Հարությունյան Վ., «Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում, «Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում (Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում- հատոր 1), գիտաժողովի նյութեր/ գիտ. խմբագիր՝ Վ.Լ.Հարությունյան, Եր., ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2020 թ., էջ 52-55
2. Սարինյան Ռ., Ուրվագիծ արդի հայ տնտեսագիտական մտքի պատմություն, VI, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021 թ., 260 էջ
3. Սարգսյան Լ., Գրիգորյան Դ., Սինգապուրի «տնտեսական հրաշքը», «Տնտեսական հրաշքները». գործարկման ուղիները Հայաստանում (Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում- հատոր 1), գիտաժողովի նյութեր/ գիտ. խմբագիր՝ Վ.Լ.Հարությունյան, Եր., ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտ, 2020 թ., էջ 176-196
4. Bajpai, P., The 5 Fastest Growing Economies in the World. Nasdaq, 2019, June 27. Available at: https://www.nasdaq.com/articles/the-5-fastest-growing-economies-in-the-world-2019-06-27 (last accessed: October 5, 2021)

5. BBC. Rwanda's Paul Kagame - visionary or tyrant? 2017, August 3. Available at: https://www.bbc.com/news/10479882 (last accessed: October 5, 2021)
6. Behuria, P. (2021). Ban the (plastic) bag? Explaining variation in the implementation of plastic bag bans in Rwanda, Kenya and Uganda. Environment and Planning C: Politics and Space. https://doi.org/10.1177/2399654421994836
7. Behuria, P., & Goodfellow, T. (2017-11-16). The Disorder of 'Miracle Growth' in Rwanda: Understanding the Limitations of Transitions to Open Ordered Development. In Deals and Development: The Political Dynamics of Growth Episodes.: Oxford University Press. pp. 217-249 DOI:10.1093/oso/9780198801641.003.0008. Retrieved 12 Sep. 2021, from https://oxford.universitypressscholarship.com/view/10.1093/oso/9780198801641.001.0001/oso-9780198801641-chapter-8.
8. Blair, E., Uwiringiyimana, C. Singapore's visionary draws followers in Africa. Reuters, 2016, March 24. Available at: https://www.reuters.com/article/us-singapore-lee-africa-idINKBN0MK1OQ20150324. (last accessed: October 5, 2021)
9. Cropley, Ed. Breakingviews - Review: Rwanda, Africa's good-news story gone bad. Reuters, 2021, April 25. Available at: https://www.reuters.com/article/us-rwanda-politics-breakingviews-idUSKBN2BO6MW (last accessed: October 5, 2021)
10. Fleming, S. In Rwanda, Drones Are Delivering Blood to Remote Communities. World Economic Forum, 2018, December 11. Available at: https://www.weforum.org/agenda/2018/12/in-rwanda-drones-are-delivering-blood-to-remote-communities/ (last accessed: October 6, 2021)
11. Guichaoua, André (2020). Counting the Rwandan Victims of War and Genocide: Concluding Reflections. Journal of Genocide Research, 22:1, 125-141, DOI: 10.1080/14623528.2019.1703329
12. Kadozi, E. (2019). Remittance Inflows and Economic Growth in Rwanda. Research in Globalization, Globalization 1 (2019) 100005, pp. 1-15. doi:10.1016/j.resglo.2019.100005
13. Ministry of Finance and Economic Planning of Rwanda (2000). Rwanda vision 2020. Kigali, Rwanda, 30 p.
14. Ministry of Finance and Economic Planning (2013). Economic development and poverty reduction strategy II 2013-2018, Kigali, Rwanda, 144 p. Available at: https://kigalicity.gov.rw/fileadmin/templates/Documents/policies/Economic_Development_and_Poverty_Reduction_Strategy2__2013-2018.pdf (last accessed: October 6, 2021)
15. Ministry of Finance and Economic Planning (2007). Economic development & poverty reduction strategy 2008 – 2012, Kigali, Rwanda, 168 p. Available at: http://www.rcsprwanda.org/IMG/pdf/EDPRS-English.pdf (last accessed: October 6, 2021)
16. National Unity and Reconciliation Commission of Rwanda (2016). Unity and Reconciliation Process in Rwanda. NURC: Kigali, Rwanda, 184 p. ISBN: 978-99977-709-3-6

17. Nweze, C. (2018). The Unprecedented Economic Growth and Development of Rwanda, Policy brief. Institute for Politics and Society: Prague, Czech Republic, 6 p. Available at: https://www.politikaspolecnost.cz/wp-content/uploads/2018/08/Rwandas-Economic-Growth-and-Development-IPPS.pdf (last accessed: October 6, 2021)
18. Transparency International (2021). Corruption perceptions index 2020, Transparency International, International Secretariat: Berlin, Germany, 30 p. ISBN: 978-3-96076-157-0
19. UN Women. Revisiting Rwanda five years after record-breaking parliamentary elections. 2018, August 13. Available at: https://www.unwomen.org/en/news/stories/2018/8/feature-rwanda-women-in-parliament (last accessed: October 5, 2021)
20. Uwizeyimana, D. (2019). Is A Singaporean-Modelled Developmental Approach Viable for other African Nations? Lessons from Rwanda. African Renaissance, Vol. 16, (No. 1), pp. 187 – 215, DOI: 10.31920/2516-5305/2019/v16n1a10
21. World Bank (2019). Doing Business 2019: Training for Reform. The World Bank: Washington, DC, 302 p.
22. World Bank (2020). Rwanda Economic Update, January 2020: Accelerating Digital Transformation in Rwanda. World Bank, Kigali. World Bank. 37 p. https://openknowledge.worldbank.org/handle/10986/33247 (last accessed: October 6, 2021)
23. World Bank (2021). World Development Indicators, https://databank.worldbank.org/source/world-development-indicators, Last Updated: 07/30/2021

References

1. Harowt'yownyan V., «Tntesakan hrashqnery'». gorc'arkman owghinery' Hayastanowm, «Tntesakan hrashqnery'». gorc'arkman owghinery' Hayastanowm (Social-tntesakan zargacman ardi himnaxndirnery' Hayastani Hanrapetowt'yownowm- hator 1), gitajhoghovi nyowt'er/ git. xmbagir` V.L.Harowt'yownyan, Er., HH GAA M. Qot'anyani anvan tntesagitowt'yan institowt, 2020 t'., e'j 52-55
2. Sarinyan R'., Owrvagic' ardi hay tntesagitakan mtqi patmowt'yown VI-Er.,HH GAA «Gitowt'yown» hrat., 2021 t'., 260 e'j
3. Sargsyan L., Grigoryan D. Singapowri «Tntesakan hrashqy'», «Tntesakan hrashqnery'». gorc'arkman owghinery' Hayastanowm (Social-tntesakan zargacman ardi himnaxndirnery' Hayastani Hanrapetowt'yownowm- hator 1), gitajhoghovi nyowt'er/ git. xmbagir` V.L.Harowt'yownyan, Er., HH GAA M. Qot'anyani anvan tntesagitowt'yan institowt, 2020 t'., E'j 176-196
4. Bajpai, P., The 5 Fastest Growing Economies in the World. Nasdaq, 2019, June 27. Available at: https://www.nasdaq.com/articles/the-5-fastest-growing-economies-in-the-world-2019-06-27 (last accessed: October 5, 2021)

5. BBC. Rwanda's Paul Kagame - visionary or tyrant? 2017, August 3. Available at: https://www.bbc.com/news/10479882 (last accessed: October 5, 2021)
6. Behuria, P. (2021). Ban the (plastic) bag? Explaining variation in the implementation of plastic bag bans in Rwanda, Kenya and Uganda. Environment and Planning C: Politics and Space. https://doi.org/10.1177/2399654421994836
7. Behuria, P., & Goodfellow, T. (2017-11-16). The Disorder of 'Miracle Growth' in Rwanda: Understanding the Limitations of Transitions to Open Ordered Development. In Deals and Development: The Political Dynamics of Growth Episodes.: Oxford University Press. pp. 217-249. DOI:10.1093/oso/9780198801641.003.0008. Retrieved 12 Sep. 2021, from https://oxford.universitypressscholarship.com/view/10.1093/oso/9780198801641.001.0001/oso-9780198801641-chapter-8.
8. Blair, E., Uwiringiyimana, C. Singapore's visionary draws followers in Africa. Reuters, 2016, March 24. Available at: https://www.reuters.com/article/us-singapore-lee-africa-idINKBN0MK1OQ20150324. (last accessed: October 5, 2021)
9. Cropley, Ed. Breakingviews - Review: Rwanda, Africa's good-news story gone bad. Reuters, 2021, April 25. Available at: https://www.reuters.com/article/us-rwanda-politics-breakingviews-idUSKBN2BO6MW (last accessed: October 5, 2021)
10. Fleming, S. In Rwanda, Drones Are Delivering Blood to Remote Communities. World Economic Forum, 2018, December 11. Available at: https://www.weforum.org/agenda/2018/12/in-rwanda-drones-are-delivering-blood-to-remote-communities/ (last accessed: October 6, 2021)
11. Guichaoua, André (2020). Counting the Rwandan Victims of War and Genocide: Concluding Reflections. Journal of Genocide Research, 22:1, 125-141, DOI: 10.1080/14623528.2019.1703329
12. Kadozi, E. (2019). Remittance Inflows and Economic Growth in Rwanda. Research in Globalization, Globalization 1 (2019) 100005, pp. 1-15. doi:10.1016/j.resglo.2019.100005
13. Ministry of Finance and Economic Planning of Rwanda (2000). Rwanda vision 2020. Kigali, Rwanda, 30 p.
14. Ministry of Finance and Economic Planning (2013). Economic development and poverty reduction strategy II 2013-2018, Kigali, Rwanda, 144 p. Available at: https://kigalicity.gov.rw/fileadmin/templates/Documents/policies/Economic_Development_and_Poverty_Reduction_Strategy2__2013-2018.pdf (last accessed: October 6, 2021)
15. Ministry of Finance and Economic Planning (2007). Economic development & poverty reduction strategy 2008 – 2012, Kigali, Rwanda, 168 p. Available at: http://www.rcsprwanda.org/IMG/pdf/EDPRS-English.pdf (last accessed: October 6, 2021)
16. National Unity and Reconciliation Commission of Rwanda (2016). Unity and Reconciliation Process in Rwanda. NURC: Kigali, Rwanda, 184 p. ISBN: 978-99977-709-3-6

17. Nweze, C. (2018). The Unprecedented Economic Growth and Development of Rwanda, Policy brief. Institute for Politics and Society: Prague, Czech Republic, 6 p. Available at: https://www.politikaspolecnost.cz/wp-content/uploads/2018/08/Rwandas-Economic-Growth-and-Development-IPPS.pdf (last accessed: October 6, 2021)
18. Transparency International (2021). Corruption perceptions index 2020, Transparency International, International Secretariat: Berlin, Germany, 30 p. ISBN: 978-3-96076-157-0
19. UN Women. Revisiting Rwanda five years after record-breaking parliamentary elections. 2018, August 13. Available at: https://www.unwomen.org/en/news/stories/2018/8/feature-rwanda-women-in-parliament (last accessed: October 5, 2021)
20. Uwizeyimana, D. (2019). Is A Singaporean-Modelled Developmental Approach Viable for other African Nations? Lessons from Rwanda. African Renaissance, Vol. 16, (No. 1), pp. 187 – 215, DOI: 10.31920/2516-5305/2019/v16n1a10
21. World Bank (2019). Doing Business 2019: Training for Reform. The World Bank: Washington, DC, 302 p.
22. World Bank (2020). Rwanda Economic Update, January 2020: Accelerating Digital Transformation in Rwanda. World Bank, Kigali. World Bank. 37 p. https://openknowledge.worldbank.org/handle/10986/33247 (last accessed: October 6, 2021)
23. World Bank (2021). World Development Indicators, https://databank.worldbank.org/source/world-development-indicators, Last Updated: 07/30/2021

ՌՈՒԱՆԴԱՅԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԹՌԻՉՔԱՁԵՎ ԱՃԸ

ՍՎԵՏԼԱՆԱ ԴԱԼԼԱՔՅԱՆ

Համառոտագիր: Ռուանդայի Հանրապետության տնտեսական փորձի ուսումնասիրությունն ***արդիական է,*** քանի որ շատ հետաքրքրական է այն, որ 20-րդ դարի ամենախոշոր ցեղասպանություններից մեկը վերապրած երկիրը սկսած 2001 թվականից ապահովել է միջինում 8 % տնտեսական աճ և համարվում է Արևելյան Աֆրիկայի ամենաարագ զարգացող տնտեսություն ունեցող երկիրը: Հայաստանի տարածքի չափով Ռուանդան, գրեթե չունենալով հանքային պաշարներ և ծովային հաղորդակցություն, հաղթահարելով ցեղասպանությունը, սովը և քաղաքացիական պատերազմը, 2000 թ. ընդգրկվեց աշխարհի զարգացող երկրների հնգյակում:

Հոդվածի **նպատակն է՝** ներկայացնել Ռուանդայի թռիչքաձև աճող տնտեսությունը՝ վերլուծելով որոշ ցուցանիշներ և համաթվեր, բացահայտել դրան հասնելու միջոցները և առաջարկել ՀՀ տնտեսության մեջ դրանց տեղայնացման

հնարավոր ուղիներ: *Խնդիրներն են* ՝ վերլուծել Ռուանդայի թռիչքաձև տնտեսությունը բնութագրող մի շարք ցուցանիշներ, ուսումնասիրել Ռուանդայի տնտեսական զարգացման ռազմավարական փաստաթղթերը, մշակել Հայաստանի համար տնտեսական կայունություն և վերելք ապահովող տեսլականի տիպային օրինակ՝ ըստ Ռուանդայի հաջողված տարբերակի: Գիտական առարկայականության սկզբունքն ապահովելու համար սույն հետազոտության համար **մեթոդաբանական հիմք** են ծառայել դիալեկտիկական, պատմական, տրամաբանական, համակարգային և իրավիճակային, համեմատական ու գործոնային վերլուծության գիտական մեթոդները: Կատարված հետազոտության **արդյունքում բացահայտվել** է, որ Ռուանդան ապահովել է տնտեսական թռիչքաձև աճ նախ և առաջ ինստիտուցիոնալ բարեփոխումների արդյունքում, որի հիմնասյուներն են հանդիսացել քաղաքական կայունության ապահովումը, հուսալի իրավական համակարգը, ազնիվ և համերաշխ կառավարությունն ու օրենսդիր մարմինը և մրցունակ ու բաց շուկաները:

Գիտական նորույթը: Ռուանդայի տնտեսական և քաղաքական բազմասպեկտ վերլուծություններն և ուսումնասիրությունները թույլ են տվել բացահայտել Ռուանդայի տնտեսության թռիչքաձև աճի ապահովման պայմանները և գործոնները, որոնց հիման վրա մշակվել են Հայաստանի տնտեսական կայունության և առաջընթացի ապահովման տեսլականի (vision) իրագործման ինստիտուցիոնալ հիմքերը, մասնավորապես՝ ռազմավարական փաստաթղթեր և զարգացման ծրագրեր (աղքատության հաղթահարման ռազմավարություն, ազգային ներդրումային ռազմավարություն)՝ յուրաքանչյուրն իր տարեկան գործողությունների ծրագրով և բյուջեով:

Ստացված արդյունքները կարող են օգտագործվել պետական կառավարման մարմինների, տնտեսական քաղաքականություն մշակողների և հետազոտողների կողմից:

Բանալի բառեր՝ տնտեսական թռիչքային աճ, տեսլական, ռազմավարական փաստաթղթեր, ցեղասպանություն, թութսի և հուտի ցեղեր, ՀՆԱ, տնտեսական աճի տեմպ, կյանքի միջին տևողություն

СКАЧКООБРАЗНЫЙ РОСТ ЭКОНОМИКИ РУАНДЫ

СВЕТЛАНА ДАЛЛАКЯН

Аннотация. Изучение Республики Руанда является ***актуальной***, так как это очень интересно, что страна, пережившая один из крупнейших геноцидов 20-го века, начиная с 2001 года обеспечила в среднем 8 % экономического роста и считается страной, которая имеет самую быструю развивающуюся экономику в Восточной Африке. Руанда, имеющая территорию, равную Армении, не имеющая почти никаких минеральных запасов и морской связи, преодолев геноцид, голод и

гражданскую войну, в 2000 г. была включена в топ пяти развивающихся стран мира.

Целью статьи является представление скачкообразного роста экономики Руанды, анализируя некоторые показатели и индексы, выявляя способы его достижения и предложение возможных способов их локализации в экономике РА. *Задачи* состоят в анализе ряда показателей, характеризующих скачкообразную экономику Руанды, изучении стратегических документов экономического развития Руанды, разработке типичнго примера видения, обеспечивающего экономическую стабильность и рост в Армении, в соответствии с успешным вариантом, примененным в Руанде. В целях обеспечения принципа научности, **методологической основой** для данного исследования послужили научные методы диалектического, исторического, логического, системного и ситуационного, сравнительного и факторного анализа. **В результате проведенного исследования было выявлено,** что Руанда обеспечила скачкообразный экономический рост прежде всего в результате институциональных реформ, для которого в качестве основы послужили обеспечение политической стабильности, надежная правовая система, честное и солидарное правительство, законодательный орган и конкурентоспособные и открытые рынки.

Научная новизна. Экономические и политические многоаспектные анализы и исследования позволили выявить условия и факторы обеспечения скачкообразного роста экономики Руанды, на основе которых были разработаны институциональные основы для реализации видения по обеспечению экономической стабильности и прогресса в Армении, в частности, стратегические документы и программы развития (стратегия по развитию бедности, национальные инвестиционные программы), каждый из которых со своей программой годовых действий и бюджетом.

Полученные результаты могут быть использованы органами государственного управления, разработчиками экономической политики и исследователями.

Ключевые слова.: скачкообразный экономический рост, видение, стратегические документы, геноцид, племена тутси и хуту, ВВП, темп экономического роста, средняя продолжительность жизни

BOOM OF THE RWANDA'S ECONOMY

SVETLANA DALLAKYAN

Abstract. The study of the Republic of Rwanda is topical, as it is very interesting that the country that survived one of the greatest genocides of the 20th century, having provided an average of 8% economic growth since 2001, is considered to be the country that has an economy with the fastest growth in East Africa. Rwanda that has a

territory equal to Armenia with almost no mineral resources and sea communication overcame genocide, famine and civil war, was included in the top five developing countries in 2000.

The **purpose** of this article is to present the boom of Rwanda's economy analyzing some indicators and indexes, identify ways to achieve it and suggest possible ways to localize them in the economy of the Republic of Armenia. There are the following challenges: to analyze a number of indicators characterizing the boom of Rwanda's economy, to study strategic documents for the economic development of Rwanda, to develop a typical example of a vision for economic stability and growth for Armenia according to the successful version of Rwanda**. The scientific methods** of dialectical, historical, logical, systemic-situational, comparative and factor analysis served as a methodological basis for this research to ensure the principle of scientific objectification. The study found that in Rwanda there **was ensured** the boom of economy primarily as a result of institutional reforms based on political stability, a credible legal system, an honest and united government, legislature and competitive and open markets.

Scientific novelty. Rwanda's economic and political multi aspect analysis and studies let us reveal the factors and conditions for the support of Rwanda's rapid economic growth, on the basis of which the institutional grounds for realization of the vision of economic stability and progress in Armenia have been developed. In particular, the strategic documents and development plans (poverty reduction strategy, national investment strategy) should be developed, each of which with its annual action plan and budget. The results can be used by government agencies, economic policy makers and researchers.

Keywords: boom of economy, vision, strategic documents, genocide, Hutu and Tutsi tribes, GDP, economic growth rate, average life expectancy.